



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թիֆ 28

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔՍԱՆԵՑԹՆԵՐՈՐԴ

15 ՕԳՈՍՏՈՍ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ի Ը.

13 ՕԳՈՍՏՈՍ 1871

ՆԱԽԱԳԱՀ. — ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Գ. ՕՏԵԱՆ ԷՖ.

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Վաւերացումն նորընտիր Երեսօխանաց :
2. Ատենական կանոնադրութիւն :
3. Համարատուութիւն Ազգ. Վարչութեան :
4. Հրաժարական Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ :
5. Վերաքննութիւն Սահմանադրութեան . — Գլուխ Ա.

Ատենը բացուեցաւ ժամ 7 ին 'ի ներկայութեան 58 երեսօխանաց , սրոյ թիւն 'ի վերջէ 51 ի յանդեցաւ , առանց մեծազոյն մաս դոյանալու :

Ատենապետ էֆ. նախընթաց Իլ. Նիստի ատենադրութեան վրայ ժողովականաց դիտողութիւններն ուղեց :

ՊէկեԱ.Ն. Թ. ԷՖ. — Թէեւ իմ խօսքերս ճշդ դիւ արձանադրուած կը տեսնեմ ատենադրութեան մէջ և այդ մասին դիտողութիւն մը չ'ունիմ , սակայն կը նկատեմ միանգամայն որ ուրիշ ժողովականաց մէկ քանի խօսքերն այլայլուած և տարրեր կերպիւ աւանուած են 'ի գիր :

Այդ խօսքերու հեղինակները կը լռեն Ատենապետ էֆ. ին հրաւերին առջեւ , և կը հարկադրեն զիս այս դիտողութիւնն ընել : Զոր օրինակ , Օգոսէն էֆ. անցեալ նիստին զեղեցիկ բանախօսութիւն մը ըրաւ , որ ատենադրութեան 106 թղ. երեսին մէջ արձանադրեալ կ'երեւին , սակայն այլայլեալ . կ'աղաչեմ զինքը որ հաճի իւր բանախօսութիւնը ճշդել իւր դիտողութիւններն ընելով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կ'երեւի թէ երեսօխանաց խնամակալութիւն մը կ'ուզէք հաստատել . եթէ Օգոսէն էֆ. իր մասին համար դիտողութիւն մ'ունի թո՛ղ հրամէ . եթէ նա կը լռէ , չը գիտեմ թէ ի՞նչպէս ուրիշ երեսօխան մը անոր կողմէն դիտողութիւն կ'ընէ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Իմ խօսքս Պէկեան էֆ. ի ըսածին պէս այլայլած չեմ տեսներ ևս , այլ միայն հակիրճ և թերի արձանադրեալ :

Չեմ յիշեր ճշդիւ այն սակաս մասերը , որ պէս զի կարող լինիմ արձանադրութեան թերին լրացնել , հետեւապէս պահանջում մը չունիմ և կը լռեմ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Մի և նոյն սակասը ես ալ կը նշմարեմ իմ խօսքիս մէջ՝ որ արձանադրեալ է ատենադրութեան 102 թղ. երեսը : Նախորդ նիստին մէջ երբ խնդիր կը յուղուէր՝ բացակայ երեսօխանի մը գրաւոր դիտողութիւնները կարդալու մասին՝ ոչ միայն ըսի թէ՛ անընդունելի են առանց հիւանդութեան և ուղեւորութեան պատճառի բացակայ դանուող երեսօխանի մը գրաւոր դիտողութիւններն ,

այլ և յարեցի այս խօսքին թէ՛ ժողովն երբ այսպէս բացակայ երեսօխմանաց կարծիքը գըրով առնելու սկզբունքն ընդունի, այն ատեն ոչ ոք կը ժողովն ժողովին դարու և՛ տունը նստելով՝ իր կողմէ ընդարձակ ճառ մը կ'ուզարկէ ժողովին, և հարցուցի թէ՛ այն ատեն ժողովը նոյն երեսօխմանը բացակայ պիտի համարի արդեօք թէ՛ ներկայ:

Աւասիկ խօսքիս այս մասը կը պակիս ատենագրութեան մէջ: Եւ դարձեալ՝ Սահմանադրութեան վերաբնեւութեան պահանջն Ա. գլխին վրայ բրած դիտողութիւնս թէ՛ և պակաս արձանագրութեան է, սակայն հիմնը հարկ չեմ համարիր ըսել, վասն զի՝ ի վերջէ առիթը պիտի գայ, ուր նորէն պիտի խօսիմ մի և նոյն նիւթին վրայ:

Արի՛ց դիտողութիւն ընող չ'ըլլալով, ատենագրութեան վերջնական ընդունելութիւնը կը մնայ մեծագոյն մաս գոյանալուն:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բացակայ երեսօխմաններէն տնայնի նախկին ծանուցած են ժողովոյն այսօրեայ նիստին իրենց ներկայ չը գրանուիր: Մինն է Այգատեան էֆ. որ իւր բացակայութեան պատճառ նշանակած չէ, իսկ միւսներն են Տ. Գարեգին վարդապետ Թաթարեան և Թորոս պէյ Գլխակ, որոնք անձնական տկարութեան պատճառաւ արգիւրներ են ժողովին դարու: Այս վերջին երկու երեսօխմանաց բացակայութիւնը ժողովոյն նախորդ մէկ որոշման համաձայն ընդունելի պատճառ մ'ունի և իրր այն՝ կը նշանակուի ներկայութեան սուսմարին մէջ:

Հիմնը որ ժողովը խնդրոց կարգին պիտի անցնի, պարտ կը համարիմ յայտնել որ անկէ դուրս երկու խնդիր ևս կայ ժողովոյ ներկայանալի: Մէկն է բացակայ երեսօխմանաց գրասար գիտողութիւնները յատենի ժողովոյ կարգալու կամ չը կարգալու խնդիրը, որ նախորդ նիստին սկիզբը յուղուեր է Այգատեան էֆ. ի մէկ նամակին առիթ և յետոյ մեծագոյն մասի ներկայութեան վերադաճուեր է անոր լուծումը: սակայն այդ օրինական թիւը գոյանալէ ետեւ սակաւ ին խնդիրն անորոշ մնացեր է ի մասացունս թողուելով: Այս մասին արտելիք որոշմանը պիտի հետեւիմ նաև Այգատեան էֆ. ի այսօրուան մէկ նամակին նկատմամբ: Իսկ երկրորդ խնդիրն է՝ եօթն երեսօխմանաց կողմէ առ Ազգային վարչութիւնն ուղղեալ հարցում մը, որ ահա առջև:

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ներկայացեալ յատենի Ընդհ. ժողովոյ

13 Յոստոս 1871

Պրուսայի վիճակին Առաջնորդ Բարթոլոմէոս Եպիսկոպոսը իրաւ է որ, զինի հրամարելուն և մինչդեռ Ազգային վարչութեան առջև դատաստանի ներքեւ կը գտնուէր, առանց վարչութեան հրամանին Պրուսայի վիճակը դարձած ըլլայ. և եթէ իրաւ է, վարչական ժողովն ի՞նչ որոշած է այս Եպիսկոպոսին նկատմամբ:

(Ստորագրութիւնք)

- Յ. Հ. Մէլէճեան-Գալէ
- Մ. Փափաջեան
- Մ. Յ. Այլաբեան
- Գ. Պառնասեան
- Գ. Ս. Օսթեան
- Թ. Պէլ
- Բ. Ղազարեան
- Պ. Պառնասեան

Այս հարցման համար ստիպողականութիւն կը խնդրեն ժողովն գոյն ներկայացնող երեսօխմանը, այսինքն կ'աղաչեն որ ժողովն իրենց հարցումն օրուան կարգի խնդրոց մէջ անցնել և ամենէն առաջ գոյն վիճարանութեան դնէ: Այս հարցումը՝ ինչպէս օրէն է՝ Ազգային վարչութեան անդամաց հաղորդուած է կանխաւ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը դիտեմ որ օրուան կարգը միայն Քաղ. ժողովոյ հրամարականի խնդիրը կը բերէ մեզ, և անոր մէջ նշանակուած չ'երեւիր Կրօնականին հրամարելու: Եթէ Կրօնական ժողովը բոլորովին էութիւն չ'ունի՝ պէտք է անպատրուակ յայտնել, որպէս զի ժողովս կողմէ գոյն:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ և այս խնդրոց կարգն անցեալ նիստին մնացած է և ինչպէս գոյն նոյնպէս անփոփոխ ներկայացուցի ժողովոյն, և սակայն աւելորդ չէ յայտնել որ՝ Քաղ. ժողովը պաշտօնէ հրամարելու տարուն պատճառաւ անցած է անոր հրամարականը խնդրոց կարգին մէջ, իսկ Կրօնականին կողմէ հրամարական եւ կամ չէ որ օրուան կարգին մէջ անցնէր:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Որքանիս եթէ կարելի է անոր հրամարականն ալ ուղարկ:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ես ամենէն առաջ հարկ կը տեսնեմ որ ժողովը խնդրոց կարգն որոշ նախ և յետոյ սկսի խնդիրներն յուղել:

ԱՂԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Այսօրեայ նիստին համար խնդրոց կարգը նախապէս պատրաստուած և որոշուած է, ուստի անտեղի կը գրանեմ ևս այդ կարգը յեղաշրջել նոր նոր փոփոխութիւններով: Իսկ եթէ կան խնդիրներ ի վերջէ երևան եկած՝ ժողովը յաջորդ նիստին կը վերադաճէ զանոնք և խնդրոց կարգին մէջ կ'անցնէ:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Իրաւ է որ խնդրոց կարգը կանխաւ պատրաստուած է, սակայն յուղուելիք խնդիրներն որոշուած և ըստ այնմ դատակարարուած չեն, մանաւանդ կրնայ ըլլալ որ այնպիսի ստիպողական խնդիրներ երևան գան, զոր ժողովը առաջ անցնէ օրուան կարգին մէջ նշանակուած միւս խնդիրներէն:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որովհետեւ խնդրոց կարգին կանխաւ որոշուած ըլլալուն և դատակարարութեանը վրայ իրարու ներհակ կարծիքներ կան, Ատենագիր էֆ. էն կը խնդրեմ որ սէտք եղած տեղեկութիւնը տայ այս մասին և սարգէ մեզ այս հակասական զրոյցները:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրուան կարգին մէջ երեցած խնդիրներն ամենքն ալ ժողովով որոշուած են և դատակարարութեան փոփոխութիւնն ալ ժողովին ծանօթ պատճառներով եղած: Նախընթաց նիստին ատենագրութեան վրայ ակնարկ մը բաւական է համարելու որ նոյն օրը Քաղ. ժողովը հրամարականին և վարչութեան համարատուութեան խնդրոց առիթ անցած խօսքերուն հետեւութեամբ՝ այն խնդիրները Սահմանադրութեան վերաբնեւութեան խնդրէն առաջ դրուի պէտք է ին: Ատենական կանոնադրութեան խնդիրն ալ առաջ անցնելու անհրաժեշտ էր, վասն զի ժողովը միշտ այդ խնդիրն ստիպողական նկատած և յատուկ մասնաժողովի մը յանձնած ըլլալէ ետեւ՝ երբ այն մասնաժողովն իր ծրագիրը պատրաստած հաղորդեց Գլխակին, Գլխակը գոյն խնդրոց կարգին վերելը զնելու պարտաւոր եղաւ: Կարծեմ այսչափ բաւական է հաստատելու որ՝ խնդրոց դատակարարութիւնը ժողովին կամաց համաձայն պատրաստուած է, հետեւապէս անոր ձեռք պատրաստուած ըսել է, և թէ հակառակ կարծիքները սխալ են:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրուան կարգին մէջ՝ երեսօխմանական նորոշ ընտրութեանց վաւերացման խնդրէն ետեւ՝ նշանակուած է ատենական կանոնադրութիւնը: Անցեալ նիստին մէջ թէ և որոշուած չէր այն, սակայն խմբագիր

Յանձնաժողովը այդ կանոնադրին ծրագիրը պատրաստած և բերած ըլլալուն, Գլխակը նոյն իսկ ժողովոյն նախորդ որոշման համաձայն կըրնար այդ խնդիրն անցնել օրուան կարգին մէջ: Իսկ եօթն երեսօխմանաց հարցումը՝ որոնցմէ մինն եմ նաև ես՝ հետի անձնական նկատումներէ նպատակ մ'ունի միայն և այն է . . .

ԱՂԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — (Յանկարծուստ ատենարանն ընդմիջելով) Կը բողոքեմ, օրուան կարգէ դուրս է այդ Պրուսայի խնդիրը, և կաղաչեմ Ատենագրեալ էֆ. ին որ այս տեսակ շեղումներու թիւը չը տայ. ապա թէ ոչ՝ ես ալ իրաւունք կ'ստանամ ըստ քմաց խնդիր մը յարուցանելու և հետեւապէս հարցնելու թէ՛ ինչո՞ւ վարչութիւնը Սոյն Նիկիոզոս Եպիսկոպոսն ի Պոլիս բերել չը տուա ցարդ, ինչո՞ւ Կարապետ Եպիսկոպոսին անհրաման Սերաստիա ճամբորդելը տեսաւ և անտարբեր կեցաւ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ որ կրնայ ժխտել՝ երեսօխմանաց առ Ազգային վարչութիւնն կարելի խնդրոց մը վրայ այսպէս օրինաւորութեան պայմաններով հարցում մը ուղղելու իրաւունքը, և ոչ որ կրնայ այսպէս արմուկ և չիօթ յարուցանելով բանարարել իմ խօսելու պատմութիւնս: Ես իրաւունք ունիմ Ընդհ. ժողովոյ ուղարկութիւնն հրաւիրելու այս հարցման ստիպողականութեանը վրայ և կ'առաջարկեմ որ ժողովը գոյն վիճարանութեան ենթարկէ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նոյն իսկ օրուան կարգին մէջ նշանակուած խնդիրներուն վիճակը կը հարկադրէ զմեզ այս օրուան նիստի համար խնդիրներն ի նորոց դատակարարել:

Բացատրեմ խօսքս: Նախ ատենական կանոնադրութեան ծրագիրն երկէ իրիկուն ուշ ատեն հաղորդուած է ժողովականաց և ոչ որ միջոց ունեցած է գոյն ուշիւ ընթեռնուի և ի միտ առնուի: Ես իսկ որ՝ իրր ժողովին Ատենագրեան՝ ամենէն աւելի պէտք ունիմ ուսանելու գոյն կանոնադիրը, հազիւ թէ կարգալու ժամանակ ունեցայ: Երկրորդ, Ազգային վարչութեան համարատուութիւն ըստած բանը թէ և անուն ունի բաց հետքն անգամ չ'երեւիր ժողովոյ Գլխակին վրայ, Երրորդ, Քաղ. ժողովոյ հրամարման խնդիրը կայ օրուան կարգին մէջ, բայց անոր անդամներէն միայն մէկ անձ մը կը նմարեմ հոս և կը մտածեմ որ հրամարատուող անձինք հոս պէտք էր ներկայ գտնուէին:

Այս ամենն ահա սակի ակն յայտնի կը հաստատեն թէ՛ ո՛րքան կարեւոր է խնդիրները դա-

սակարգել : և թէ անհնար է որ ժողովը մէջ տեղը գտնուած օրուան կարգին հետեւի :

ԵՄԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Յանուէն Քաղ. Ժողովոյ) : Քաղաքական ժողովոյ համարատուութեան և հրաժեշտին վրայ եղած ակնարկութիւնները կ'ստիպեն զիս բացատրութիւն մը տալ և տեղի չը թողուլ այնպիսի մեկնութեանց՝ որոնք Քաղ. Ժողովոյ դիտաւորութեան չեն համաձայնիր : Նախորդ նիստին Քաղ. Ժողովն առաջարկեց որ իւր համարատուութիւնն առաջնութիւն ստանայ և խնդրոց կարգին մէջ անցնի , և փախաբեցաւ որ տեղեկագրին տպագրութիւնն աւարտելով այս նիստին ներկայանայ ժողովոյն , սակայն մեծապէս կը ցաւի որ տպագրական դժուարութիւններն իւր փախաբնի դերու հանցին : Արտաքոյ կարգի ճիշդութիւնը երեսփոխանաց ձեռքը հասնէր , սակայն այս ալ արդիւնք մը չը պիտի կրնար ունենալ , վասն զի ժողովը դայն ի քննին առնելու համար գէթ քանի մը օր առաջ պէտք էր ստացած լինէին դայն երեսփոխանք մինչդեռ եթէ նիստի օրը ընդունէին՝ հազիւ ուրեմն կրնային հարեւանցի թըղթատել այդ տեղեկագիրը : Այս մտածումներով Քաղ. Ժողովն հարկադրուեցաւ յաջորդ նիստին թողուլ հրատարակութիւնը : Իսկ անոր հրաժարականի խնդիրը բոլորովին կարծուածէն տարբեր վիճակ մ'ունի , և Քաղ. Ժողովոյ ցարդ պաշտօն վարելը լինի համակերպութիւն մ'է ընդհ. ժողովոյ որոշման : Քաղ. Ժողովն ասկէ առաջ իւր համարատուութեան հետ նաեւ իւր հրաժեշտը ընդհ. ժողովոյ մատոյց , սակայն ումանք համարատուութեան և հրաժեշտի տարբեր խնդիրներն ի մի յեռեւել համարեցին և խնդիր յարուցին թէ մինչեւ որ ընդհ. ժողովն ի քննին չ'առնու Քաղաքականին համարատուութեան տեղեկագիրը , անպատեհ է անոր հրաժեշտն ընդունիլ : Թէեւ երեսփոխաններէն ոմանք ասոր հակառակը պնդեցին , թէեւ Քաղ. Ժողովն յայտնեց որ եթէ մեղադարտ գտնուած է ինք իր պաշտօնին մէջ՝ ընդհ. ժողովոյ վճիռը կուգայ կը գտնէ զինքը , ուր և ըլլայ , սակայն վերջապէս ընդհ. ժողովն որոշեց որ Քաղաքական իր պաշտօնը շարունակէ . և ահա այս է պատճառ որ դեռ ևս աղգային գործոց կառավարութեան գլուխը կը գտնուի նա , և անձնու իրարար կը շարունակէ իրմէ սպասուած ծառայութիւնը , որպէս զի՝ մինչեւ որ իւր յաջորդը ընտրուի՝ Վարչութեան ատեանը թա-

փուր չը մնայ : Բայց ընդհ. ժողովն եթէ ուզէ կրնայ նաեւ այս պահուս Քաղ. Ժողովոյ հրաժարականը համարատուութեանն առաջ անցընել օրուան կարգին մէջ և դայն լուծել որոշել : Քաղ. Ժողովը սխալաբար է միշտ ասպարէզէն յօժարակամ քաշուելու , ինչպէս առջի օրէն իւր միակ խնդիրն եղած է :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչ որ ալ լինի Քաղաքական ժողովոյ համարատուութեան և հրաժեշտի երկարաձգութեան շարժառիթը , սա անժխտելի է թէ ժողովը չը կրնար նոյն խնդիրներն այս պահուս յուզել և լուծել . հետեւաբար կը կրկնեմ թէ ամեն բանէ առաջ պէտք է օրուան կարգն որոշել :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Մինչև ցարդ քանիցս հարցում եղաւ թէ ի՞նչու կրօնական ժողովը իւր համարատուութեան տեղեկագիրը չը ներկայացնէր ժողովոյն , սակայն կը ցաւիմ ըսելու որ այս հարցումը դժնայուցիչ պատասխան մը չընդունեցաւ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ատենարանին խօսքն ընդմիջելով) Օրուան կարգէն դուրս է այդ խնդիրը և ներքի չէ ատոր վրայ խօսիլ :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Ուրեմն կ'առաջարկեմ որ օրուան կարգն անցնի :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եւ սակայն զիտեղ կուտամ ձեզ որ օրինաւորութեան պայմաններով չը ներկայանար ձեր առաջարկութիւնը Գլուխին , և իւր այս վիճակին մէջ հետեւութիւն մը չունենար :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը կրկնեմ Պատենատեան էֆ. ի առաջարկութիւնը :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ Գլուխն եօթն երեսփոխանաց հարցումը հաղորդեց ժողովին , եղան ոմանք որ անսովոր ինչ կարծեցին դայն : Գլուխէք ինչ կը նշանակէ այս հարցումը և ինչ կենթադրէ . ընդհ. ժողովոյ ամենէն զերազոյն և ամենէն մեծարոյ իրաւունքն է այն , և այս իրաւունքով է որ հանապազօրեայ հսկողութիւն մը կը գործադրէ նա Վարչութեան վրայ . այս միակ եղանակը կայ՝ երբ հասարակաց կարծիքը խնդիրով մը յուզեալ է՝ համարատուութեան որոշեալ պայմանաժամէն առաջ համարուելու Վարչութեանն :

Ամեն երեսփոխանական ժողովներու մէջ այսպէս հարցումներ կ'ըլլան ինչ ինչ պայմաններով , նոյն իսկ մեր երեսփոխանական ժողովն ասկէ առաջ անգամ մը այս իրաւունքը հաստատեց , երբ խնդիր յարուցին այդ մասին , միայն թէ

Ատենական կանոնագիր մը չ'ըլլալուն՝ սահմանուած չէին հարցման պայմանները . նոր ծրագրին մէջ ատար վերաբերեալ յօդուածներ տեսայ : Այս հարցումն ընող եօթն երեսփոխանք պարտաւորութիւն մ'ունէին , այն է նախապէս Վարչութեան հաղորդել իրենց հարցումը , վասն զի նա՝ որ տեղեկութիւն մը , պատասխան մը տալու հրաւէր կ'ընդունի , բնականօրէն իրաւունք ունի առաջուց գիտնալու թէ ի՞նչ կը հարցնեն իրեն . այս եօթն երեսփոխաններն իրենց պարտաւորութիւնը կատարած են , հարցումն յառաջագոյն հաղորդելով Վարչութեան , և հիմայ կուգան իրենց անտնօրինելի և անհակառակելի մէկ իրաւունքն ի գործ դնելու :

Արդ կը մնայ ժողովին որոշել թէ՛ Ե՛րբ ուշադրութեան պիտի առնու այս հարցումը , վասն զի որքան և դայն ներկայացնող երեսփոխանք ստիպողականութիւն կը խնդրեն , ժողովոյ ձեռնհասութիւնը կրնայ դայն ուրիշ ատենի թողուլ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Երեսփոխաններն իրաւունք ունին այս կամ այն խնդրոյն վրայ հարցում ուղղելու , և այս իրաւունքն անբռնարարելի է , սակայն իրենց աչքին որքան կարեւոր և ստիպողական թուի հարցումը քանի որ Վարչութիւնը պիտի պատասխանէ , անոր կամքն կախումն ունի հարցման ստիպողականութիւնն որոշել , առ ժամայն պատասխանել կամ ուրիշ ատենի թողուլ , ինչպէս արժան դատի : Ո՞վ կրնայ Վարչութեան այս իրաւունքը ժխտել : Ո՞վ իրաւունք ունի անմիջական բացատրութիւն պահանջել առանց դատաստարտելու դայն , երբ նա այսպիսի հարցումի մը պատասխանը համարատուութեան ժամուն վերադառնէ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ոչ քը կը զանայ Վարչութեան իրաւունքը . այս տեսակ հարցման մը առջեւ կրնայ նա՝ հիմայ չեմ պատասխաներ՝ ըսելու : Սակայն ինչպէս ըսի , երբ հասարակաց կարծիքը խնդիրով մը կը յուզուի և կը տագնապի , երբ երեսփոխանք կը տեսնեն թէ Վարչութիւնն իր պարտաւորութիւնը չը կատարէր , կամ թէ չը գիտեն թէ ո՞ր ատիճան կատարած է , այն ատեն հարցում մը կը ներկայացընեն . ժողովն անոր ստիպողականութեան վրայ կը վիճարանի , կ'որոշէ , հարցումը կ'ուղղուի իսկ Վարչութիւնն երբ օրինաւոր պատճառներ ունի անմիջապէս չը պատասխանելու , իրեն կը վերաբերի ըստ այնմ գործել :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Հարցման ստիպո-

ղականութիւնն , ըստ Օդակն էֆ. , Վարչութեան կ'իջնայ որոշել , բայց ևս կ'ըսեմ թէ՛ ժողովը որքան և ատենական կանոնագիր մը դեռ ևս չունի , կրնայ սակայն սահմանագրական ազգաց օրինակին համակերպիլ և ըստ այնմ ուղղել իւր ատենական ընթացքը : Կ'առաջարկեմ ուրեմն որ ստիպողականութեան խնդիրը քուէի դուրսի :

ԱՆԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Կը դարմանամ որ ժողովը կը զարտուղի օրուան կարգէն և դայն զլիսովին մէկիւր կը նեակէ : Եթէ այսպէս ամեն անգամ եօթն կամ օթ երեսփոխան միանան և ստիպողական է ըսելով հարցումներ բերեն ժողովին , ատանց ստիպողականութիւնը քննելու համար այժ առանձինն ժողով մը պէտք է : Ես ամենեւին չեմ ընդունիր այս չեզումները . եթէ նկատուութեան արժանի նոր խնդիր մը կայ , խնդրոց կարգը պէտք է մտնէ նախապէս , և յետոյ ժողովն այդ մասին պէտք եղածը անտնօրինէ :

ՊԵՂԵԱՆ Թ. ԷՖ. — Անտք՝ որ կը կարծեն թէ օրուան կարգէ դուրս խօսք չը տրուի բնաւ՝ շարաչար կը սխալին , վասն զի՝ ինչպէ՞ս Ատենապետ էֆ. ալ ըսաւ՝ երեսփոխանք իրաւունք ունին նոր խնդիր մը յարուցանել , Վարչութեան հարցում մը ուղղել յատենի , հերքել է որ ժողովն՝ զղաղով անոնց ստիպողականութիւնն ու կարեւորութիւնը՝ հաւանութիւն տայ : Արդ , եթէ կը ներէ ժողովը , պիտի ջանամ ներկայ հարցման ստիպողականութիւնը բացատրել և հաստատել միանգամայն թէ ի՞նչպէս անմիջական պատասխանի մը կը կարօտի այդ հարցումը :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Կ'առաջարկեմ Գլուխին որ՝ վիճարանութիւն բանալու համար՝ ժողովոյն կամքը հարցնէ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՍՍ ՎՐԴ. — Եթէ ժողովն ընդունի խնդրոյն ստիպողականութիւնն , այն ատեն միայն ներքի է այս նորեկ խնդրոյն վրայ խօսիլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ընդհ. ժողովը Սահմանագրութեան 60րդ յօդուածին դրուութեամբ իրաւունք ունի Ազգ. Ժողովոց վարչութեանը վրայ հսկելու , և այս անժխտելի իրաւունքն ի գործ դնելու համար՝ ի հարկին կրօնական ժողովոյ կամ Քաղաքականին հարցում կ'ուղղէ , բացատրութիւն կը խնդրէ , և ոչ որ կրնայ այս իրաւունքը կապուել իրմէ : Ուրեմն այս պարագայիս մէջ , ուրիշ բան չը մնար ձեզ ընելու՝ այլ հարցման ստիպողականութիւնը որոշել , դայն քուէի ենթարկելով :

Աւելորդ կը համարի Ատենապետ էֆ. վիճա-
բանութիւնն երկարել և եօթն երեսօտիսանաց
հարցման նկատմամբ ժողովոյ կամբը կը հար-
ցնէ : Ժողովը մէկ քուէի դէմ 22 քուէով կ'ըն-
դունի և կ'որոշէ այս հարցման ստիպողակա-
նութիւնը :

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ընդ ամէնը 25 քու-
էտարիու և խել մ'ալ անտարրերնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կ'աղաչեմ որ թեթևու-
թեամբ չ'արտասանենք մեր ընկերներուն հա-
մար այնպիսի բառեր՝ որ կրնան զանոնք վիրա-
ւորել : Գիտենք թէ ի՛նչ հետեւութիւններ ծա-
ղեցան այսպիսի բառերէ : Ոչ ոք իրաւունք ու-
նի անտարրերութիւն կոչել՝ երբ երեսօտիսան
մը քուէի չը մասնակցիր : չը մասնակցելու հա-
մար անտարրերութենէ զատ պատճառներ կըր-
նան ըլլալ, զոր օրինակ, ժողովոյս Ատենա-
պետներէն Գարակէօղեան էֆ. խնդիրը քուէի
դրուելու միջոցին ներս մտաւ . ի՛նչպէս կ'ու-
զէիք որ քուէ տար :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Հիմայ քանի որ ժո-
ղովը հարցման ստիպողականութիւնն ընդունեց
և հարցումն արդէն կարգացուած է ժողովոյն
մէջ, կը մնայ Քաղ. ժողովոյ պէտք եղած պա-
տասխանը տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թողէք որ հարցում ընող
երեսօտիսաններն իրենց ուղած կերպովը յառաջ
բերեն զայն :

Այս պահուս հարցումն ուղղող երեսօտիսան-
ներն իրենց ակտները կը թողուն և ի մի վայր
կուգան կը համախմբին ժողովարանին մէջ :
Ատենապետ էֆ. եւս իր ակտը թողով Գա-
րակէօղեան էֆ. ի կ'երթայ և կը միանայ նոյն
Քրեսօտիսանաց, որոնց հետ ստորագրած էր
հարցումը : Պէկեան էֆ. խօսք կ'առնու յանուն
իւր ընկերակցաց և կ'ըսէ :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Պրուսայի Առաջնորդ Բար-
թուղիմէոս Եպիսկոպոսը՝ քանի մը ամսէ հետէ
Ազգ. վարչութեան ատենին առջև դատի ներ-
քեւ կը գտնուի և սակայն դատաստանը չը վեր-
ջացած անհրաման կը վերադառնայ ի Պրուսա :
Չը մնայ մէկը ազգին մէջ որ այս եղելութեան
տեղեկացած չըլլայ : Բոլոր քաղաքները լի են
այս խնդրոյն վերաբերող տեղեկութիւններով
և յողուածներով . . .

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — (Յանկարծ ընդմիջե-

լով) Եւ միթէ ժողովը մեծագոյն մաս ունի՞ որ
որոշում կ'ընէ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԳ. — Կը կրկնեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես անտեղեակ կը գըտ-
նուիմ ատենի ընթացքին և խնդրոյն դար-
ձուածքներուն, ուստի կ'աղաչեմ զԱտենապետ
Օտեան էֆ. որ յարուցեալ դիտողութեանց պա-
տասխանէ և այս շիտթութիւնը պարզէ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ընդհ. ժողովն որոշեր է
որ սահմանեալ ժամուն ատենանը բացուի, որ և
ըլլայ գտնուող երեսօտիսանաց թիւը, վիճա-
բանութիւն լինի խնդրոց վրայ, սակայն որո-
շումը մեծագոյն մասի ներկայութեան վերա-
պահուի : Գիււանը ժամը մինչև 7 սպասեց ժո-
ղովականաց և ուր ուրեմն ատենանը բացաւ :
Խնդիրներուն մէջ հարցում մ'ալ գտնուեցաւ
եօթն երեսօտիսանաց կողմէ առ Քաղ. ժողովա-
կանս. վիճարանեցան ոչ թէ բուն խնդրոյն վրայ,
այլ խնդրոյն ստիպողականութեանը վրայ և ա-
մենամեծ մասով ընդունեցան այս ստիպողակա-
նութիւնը, այսինքն խնդրոց կարգին մէջ խնդ-
րոյն բռնելու տեղն որոշեցին, բան մը որ եր-
բեմն մինակ Գիււանն ինք ալ կրնայ ընել :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Պէտք էր սղա-
սել մեծագոյն մասի ներկայութեան, խնդիրը
քուէի դնելու համար :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Խնդիրը հոս հարց-
ման մը վրայ է միայն, և որոշման կարօտ գործ
չը կայ որ մեծագոյն մասի ներկայութիւն չըն-
տըռել հարկ ըլլայ : Երեսօտիսաններէն ոմանք
հարցում մը պիտի ուղղեն առ Քաղ. ժողովն
և պատասխան մը ընդունին, չեմ կրնար ըմ-
բռնել թէ ինչո՞ւ այս պարզ բանակցութեան
առջև այսքան խիստ պահանջումներ կը յարու-
ցանեն և Ընդհանուր ժողովոյ կը զրանան իր
ազատութեան մէկ իրաւունքը :

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Նոր խնդիր մ'է
այս և ժողովը կը շեղի օրուան կարգէն :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ժողովն որոշում մը չը-
բաւ, այլ հարցում մը միայն պիտի ուղղուի Ազ-
գային վարչութեան, երբ պատասխան մը ըն-
դունուելէ ետեւ խնդիրն յանդի հոն՝ ուր որո-
շում մը տալ հարկ ըլլայ, այն ատեն անուշտ
մեծագոյն մասի ներկայութիւնը պէտք է չըն-
տըռել. հիմայ քանի որ ժողովն իւր մեծագոյն
մասովն ընդունեց որ հարցում մը ուղղուի և
արդէն սխառ, մէկ քանի անձինք իրաւունք
չունին արդելք յարուցանելու և կը պարտա-
ւորին համակերպիլ ժողովին կամայք : Իսկ ես

վերստին ձեռք կառնում խօսքիս թելը, եթէ
Գիււանը կը հաճի թոյլտուութիւն ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ զարմանօք
թէ այն ժողովականք՝ որ լուեցին խնդիրը քուէի
դրուած ատեն և իրենք ալ ուրիշներու հետ
քուէ տուին՝ ելեր բողոք կը բառնան մեծա-
գոյն մասի չըոյութիւնը պատճառ ցոյց տալով
և հարցումը կը ջանան խափանել :

Ազգայի ձայն մը բարձրանալով ատենին կա-
նանաւորութիւնը պահ մը կը վրդովէ, սակայն
Ատենապետ էֆ. ի ազգարարութիւնները վե-
րըստին բարեկարգութիւնը կը հաստատեն :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Բողոքող երեսօտիսանները
չե՞ն տեսներ թէ ո՞րչափ է ծանրութիւնը տըր-
ուած որոշման. կէտ մը՝ զոր Գիււանն ինք կըր-
նար որոշել ըստ պարագային, խնդիրն առաջ
կամ ետքը յուզելու կէտը : Շինուած կանոնադ-
րութեան ծրագիրն իսկ զայս կը հաստատէ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԳ. — Մինչև ցարդ ներ-
կայ երեսօտիսանաց թուովն ատենանը կը բաց-
ուէր, օրուան կարգի խնդիրները կը յուզուէին
և որոշումներն մեծագոյն մասի ներկայութեան
կը վերապահուէին. բայց քանի որ նոր խըն-
դիր մը երեւան կ'երնէ, օրուան կարգէ մը դուրս,
անտեղի չէ բնաւ աւարկել՝ թէ մեծագոյն մա-
սամբ կրնայ ժողովն նոյն խնդրոյն օրուան կա-
գին մէջ անցնիլն որոշել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես խօսից կարգը պահե-
լով բանակցութիւնը շարունակել տամ պիտի :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Յաւալի է որ ոմանք
սկզբունքի չըջանէ դուրս ելնելով անձնական
նկատումներու մէջ կը մտնեն և խնդրոյն պար-
զութիւնը կը կնճռուեն :

Ժամանակէ մ' ի վեր Պրուսայի . . .

Ատենարանին խօսքը յանկարծ Տ. Ամբրո-
սիոս վրդ. և Ալաճաճեան Հ. էֆ. կ'ընդմիջեն
միաձայն, ազմկելով ատենանը : Ժողովականե-
րէն ոմանք այս ընդհատումին դէմ բողոք կը
բառնան ազգութեամբ, չուկ մը կ'ընթանայ
ժողովոյն մէջ և բարեկարգութիւնը՝ պահ մը
խանդարելէ ետեւ՝ ուր ուրեմն կը հաստատուի
Ատենապետ էֆ. ի կրկնակի ազգարարութիւն-
ներովը :

Յ. ՈՍԿԱՆ ԷՖ. — Էթի նտինե՛ր, խնդրոյ մը
ստիպողական կարեւորութեանը վրայ կը վիճենք,
բայց ոմանէն կարեւոր բանը ժամանակին խը-

նայողութիւնն է, ժամանակը խիստ թանկա-
զին բան է, խնայեցէ՛ք անոր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէեւ ժողովը խնդիրը
քուէարկեր և հարցումն ուղղելու համար իւր
հաւանութիւնը յայտնեց է, սակայն քանի որ
ժողովականներէն ոմանք մեծագոյն մասի չը
գոյութիւնը իբր զէնք գործածելով խառնակու-
թիւն կը յարուցանեն, այս վիճակին վերջ տա-
լու համար լաւագոյն կը համարիմ՝ առ կախ թո-
ղուլ խնդիրը և մեծագոյն մասի ներկայութեան
սպասել :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Կը բողոքեմ Տ.
Ամբրոսիոս վարդապետի և Ալաճաճեան էֆ. ի
դէմ, որոնք իմ խօսելու ազատութիւնս այսպէս
չարաչար կը բռնաբարեն :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Առանց այժմէն պա-
տասխանելու մեզի նիւթ եղող հարցման, իբր
Ատենապետի Քաղ. ժողովոյ, վասն զի պատաս-
խանելու ժամը չէ հիմայ, կ'ուզեմ անկողմնա-
կալ ոգւով քննել այն խնդիրն որ այսքան շիտ-
թութեանց տեղի կուտայ : Երեսօտիսաններէն
ոմանք ուղեցին հարցում մ'ուղղել վարչու-
թեան և ստիպողականութիւն խնդրեցին, ո-
մանք՝ զայն իբրեւ արտօքը կարգի խնդիր մը՝
չուղեցին այս նիստին մէջ յուզել, և հուսկ ու-
րեմն ժողովը քուէարկեց հարցման ստիպողա-
կանութիւնն և ընդունեց զայն : Այն ինչ հար-
ցումը սկսեր էր ուղղուիլ, և ահա մեծագոյն
մասի չը գոյութիւնը մէջ կը բերեն և կ'ուզեն
հարցումը խափանել, առարկելով թէ առանց
մեծագոյն մասի ներկայութեան ներելի չէ խըն-
դիր մ'որոշել : Թերեւս արդարացի լինի իրենց
դիտողութիւնը, թերեւս սխալած լինի ժողո-
վականաց մեծագոյն մասն այս խնդիրը քուէ-
արկելով, սակայն այդ դիտողութիւնն ընդուն-
ըր՝ որ խիստ սակաւաթիւ են՝ իրենց կարծիքն
յայտնելէ և բողոքելէ ետեւ կարծեմ չեն կըր-
նար աւելի առաջ երթալ և բացարձակօրէն
պնդել որ ժողովն առ ժամայն ետ առնէ իր ո-
րոշումը :

Երբ կարծիքները ժողովոյ մէջ այսպէս եր-
կուտեք յամառին մնան իրենց տեսութեան
կէտին վրայ, անհնար կ'ըլլայ դէպ ի յառաջ
քայլ մ'առնուլ : Եւ ի՛նչ է խնդիրը, հարցում
մ'ուղղել վարչութեան : Մէկ քուէի դէմ ժո-
ղովն իր մեծագոյն մասովն ընդունած է զայն,
թող ուրեմն հարցումն ուղղուի, և երբ խըն-
դիրն որոշում մ'ընդունելու վիճակին հասնի՝
այն ատեն ժողովոյ օրինական թիւը միշտուի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երևույթեան էֆ. շատ աղէկ բացատրեց խնդրոյն վիճակը և ես իրաւորս ներհակ կարծիքներն աւելի հեշտիւ հաշտեցնելու համար միջոց մը կը մտածեմ : Ժողովոյ մեծագոյն մասը 55 թուով կը կազմուի և քուէարկութեան պարագայի մէջ՝ խնդիրն օրինաւորութեամբ որոշելու համար՝ 28 քուէ պիտի փնտռուէր : ուրեմն ժողովն եթէ կը հասնի՝ վերստին քուէի կը դնէ ներկայ խնդիրն , և եթէ նոյնքան քուէ գտնէ՝ օրինապէս ընդունուած կը հրատարակէ հարցման ստիպողականութիւնը :

Այս առաջարկութիւնն արձագանգ չը գրտնէր : Պէկեան էֆ. կը պնդէ խօսից թերը ձեռք առնուլ , վերստին շիտիկ և շուտ կ'սկսի տարածիլ , հետեւապէս Ատենապետ էֆ. ատենանը կը վերցընէ և ժողովը պահ մը դադար առնելէ ետեւ՝ վերստին ատենանը կը շարունակուի ընդ ատենապետութեամբ Օտեան էֆ. ի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տակաւին 48 երեսօնականք ներկայացան և ժողովը մեծագոյն մաս ունենալու համար դեռ եւս 7 երեսօնականաց ներկայութեան կը կարօտի : Պահ մ'աւաջ եղած բանակուիւր զիտէք , ատենին սկիզբը ժողովն ինք դասակարգեց օրուան խնդիրներն , և այս է կարծեաց անհամաձայնութեան և բանակուի բովանդակ նիւթը : Ժողովը կամ այս դասակարգութիւնն ընելու իրաւունք ունի կամ չ'ունի , եթէ չ'ունի՝ իրեն ուրիշ բան չը մնար ընել , եթէ ոչ ելնել մեկնիլ լուկեայն : Սակայն երբ ժողովի մը կ'ըսուի թէ վիճարանելու իրաւունք ունի ներկայ երեսօնականաց թուով , չեմ կրնար ըմբռնել թէ՛ ինչո՞ւ ժողովն ազատ չը լինի այս կամ այն խնդրոյն վրայ վիճարանելու : Ժողովն ուղեց նոր հարցման մը վրայ վիճարանութիւն բանալ և Գիւանին պարտքն է ըստ այնմ շարժիլ :

Իսկ երբ խնդիրն այն վիճակին դայ հասնի , որ որոշում մ'ենթադրէ , այն ատեն անտարակուսելի է թէ ժողով և Գիւան խնդրոյն վրայ որոշում տալու ձեռնհաս չ'են : առանց մեծագոյն մասի ներկայութեան , և կ'ստիպուին կանգ առնուլ : Արդ՝ խօսքը Պէկեան էֆ. ինն է :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ժողովոյ որոշումը սխալ մեկնեցիք , խօսք կ'ուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյ որոշմանց գործադրութեան պաշտօնեայն եմ ես , և իմ պար-

տաւորութիւնս կը կատարեմ , եթէ սխալ կը մեկնեմ անոր որոշումները : կրնաք զիս ամբաստանութեան ներքեւ ձգել :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ձեր բացատրութեան մէջ սխալ կայ , ժողովն որոշեց հարցում ուղղել և չէ թէ վիճարանիլ անոր վրայ , փանջի կարծեմ հարցում ըսուած բանը վիճարանութեան չ'ենթարկուիր : Թող ժողովականքը սեն խղճի մտօք թէ՛ ի՞նչ բանի տուին իրենց քուէն և խնդիրը պարզեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես արդէն իմ կարծեաց վրայ մեծ վստահութիւն ունեցողներէն չեմ , երբ դուք ալ այս աստիճան անվստահ ըլլաք իմ վրայ , անկարելի կ'ըլլայ ինձ ատենապետութեան պաշտօն վարել : Քիչ մ'եւս համբերող եղի՛ք և ատենական կանոնադրութիւնն հաստատուելէ ետքը այսպիսի դժուարութիւններ չէք ունենար :

Ա.Ա.ՃԱՍՍՐԵԱՆ Հ. ԷՖ. — Խօսք կ'ուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Պէկեան էֆ. ինն է . դուք խօսք չուճիք :

Ատենապետ էֆ. իւր ամօքը դարձեալ Գարակչօղեան էֆ. ի կը թողու և ժողովականաց մէջ տեղ կ'առնու :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Երեսօնական էֆ. ներժամանակէ մը հետէ Պրուսայի Առաջնորդի խնդիր մ'երեւան ելած է , որ մտքերը կը յուզէ , որ հրատարակային թերթերու նիւթ կը մատակարարէ և չեմ կարծեր որ մէջերնիս գրտնուի Երեսօնական մը՝ որ այսքան հրատարակութիւններէ ետեւ՝ տակաւին զիտակ չըլլայ այն եղելութեան , որ զմեզ անասելի ցաւօք և զարմացումով կը համակէ :

Պրուսայի Առաջնորդ Բարթոլոմէոս Եպիսկոպոսը՝ Ազգային Վարչութեան ատենին առջեւ դատի ներքեւ գտնուած միջոցին՝ առանց Վարչութեան արտօնութեան յանկարծ կը վերադառնայ ի Պրուսա : Երբ լրագիրներն այս լուրը հրատարակեցին , Վարչութիւնը լուց և տարածայնութիւնը տակաւ առ տակաւ ստուգութեան կերպարանք մ'առաւ : Իրողութեան մանրամասնութեան չեմ ուզեր մտնել և հարկ ալ չը կայ . առ այժմ պէտք չ'է մեզ գիտնալ թէ Առաջնորդն իւր դատին մէջ անմեղ է թէ յանցաւոր . փանջի մեր փնտռածն այդ չ'է և Վարչութեան համարատուութեան ժամուն կը սարգուի այդ կէտը . այլ քանի որ Բարթո-

ղիմէոս Եպիսկոպոս դատի ներքեւ գտնուած միջոցին փախած է , մեղապարտ է , որովհետեւ իւր այս ասորինի վարմունքովը ազգային իշխանութեան դէմ ասպտամբութեան գրօք պարզած է : Երեսօնական էֆ. ներ , այսօր Բարթոլոմէոս Եպիսկոպոսն Ազգ. Վարչութեան դէմ ասպտամբ է , ազգային իշխանութեան դէմ ըմբոստ մ'է , անհերքելի է այս . եթէ անպատիժ մնայ նա՝ Ազգ. կեդրոնական վարչութեան ազդեցութիւնը կը տկարանայ , ազգային իշխանութիւնը կը նուազի , հետեւաբար անիշխանութիւնը կը յաջորդէ : Ահա այս պատճառներով հարցման ստիպողականութիւնը . . .

Ատենապետ էֆ. ընդմիջելով բանախօսութիւնը կը յայտնէ թէ՛ , հարցման ստիպողականութիւնն ընդունուած է և անոր վրայ խօսիլն աւելորդ :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — (խօսից թերը ձեռք առնելով) Արդ՝ կը հարցնեմ Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ թէ՛ յիշեալ ըմբոստ Եպիսկոպոսին դէմ ի՞նչ անմիջական տնօրէնութիւն ըրաւ , և թէ ինչո՞ւ ցարդ պէտք եղածը գործադրելով՝ չը ջանաց Ազգ. Վարչութեան պատիւը՝ որ այսպէս թշնամանուած է ազգային պաշտօնատարի մը կողմէ՝ պահպանել :

Կը խնդրեմ որ այս հարցմանց պատասխանը բարեհաճին տալ Ազգ. Վարչութեան ներկայ անդամները :

ԵՆՈՒՍՈՒՓԵԱՆ Տ. ԷՖ. (Յանուն Ազգ. Վարչութեան) Սպասեցի տեսնելու համար թէ Վարչութեան ուղղելի հարցումն ի՞նչ կերպարանքով և ի՞նչ պահանջումներով պիտի ներկայանար : Եթէ վիճարանութիւն առաջարկուեր այն անցից և խնդիրներուն վրայ՝ որոնք Վարչութեան և Բարթոլոմէոս Եպիսկոպոսի մէջ տեղի ունեցան , պիտի ըսէի թէ՛ Քաղ. Ժողովոյ համարատուութեան ատեն բացէ՛ք այդ վիճարանութիւնը , քննադատեցէ՛ք Վարչութեան ընթացքն ու արարքը , և այսքան պիտի լինէր իմ բովանդակ պատասխանս : Եւ սակայն հարցումը սարգուէն տեղեկութիւն կը խնդրէ Վարչութեան վերջին տնօրէնութեանց մասին , և ծայրայեղ կարեւորութիւն մը կ'ընծայուի կատարուած եղելութեան , ուստի չեմ կրնար անտասխանի թողուլ և կը փութամ՝ յանուն Ազգ. Վարչութեան՝ պատասխանել եղած հարցման , առանց որ և է վիճարանութիւն ընդունելու : Եւ նախ սա կըսեմ յուզեալ մտքերն հանդար-

տեցնելու համար թէ՛ խնդիրն այնքան հանրական կարեւորութիւն մը չունի , այլ մտանաւոր է և պարզ : Ահաւասիկ պատմութիւնը :

Երկար ժամանակէ ՚ի վեր Պրուսայի ազգայիններէն ոմանց և տեղւոյն Առաջնորդին մէջ ծագած անհամաձայնութիւնը հետզհետէ ծանրանալով , երբ անցեալ տարի Գեր. Ներսէս Ա. Եպիսկոպոսը անձնական տկարութեան պատճառաւ Պրուսա կերթայ , Ամեն . Սրբազան Պատրիարք Հայրը նորա կը յանձնարարէ այդ անհամաձայնութեան պատճառները քննելով գտնաք իրաւախոհ ընելու գործը : Գեր. Ներսէս Ա. Սրբազան թէպէտ և Առաջնորդը տրամադիր կը գտնէ հաշտութեան , սակայն անոր հակառակորդաց առանց դատաստանի իրաւախոհ ըլլալ չուղեղնուն համար , իւր ջանքերն ՚ի դերու կ'ելնեն :

Մէկ քանի ամիս ետքը՝ երբ Բարթոլոմէոս Եպիսկոպոս մայրաքաղաքս կը գտնուէր՝ Պրուսայէն տասն և մէկ ստորագրութեամբ բողոքադիր մը ներկայացաւ Վարչութեան , որ ծանր ամբաստանութիւններ կը պարունակէր անոր դէմ :

Վարչութիւնն ըստ օրինի այս ամբաստանագիրը Բարթոլոմէոս Եպիսկոպոսին հաղորդելով՝ իրմէ բացատրութիւն խնդրեց և անոր հետ բանակցելէ ետեւ որոշուեցաւ որ , ամբաստանողներն անձամբ կամ փոխանորդաբար ներկայանան Վարչութեան ատենին , և եթէ չը կարենան ապացուցանել իրենց ամբաստանութիւնները՝ Տէրութեան օրինաց համաձայն պատժուին , ազգային բարձրաստիճան պաշտօնատար մը զրոյարտած ըլլալուն համար :

Երբ այս կերպիւ դատաստանն սկսաւ , ինչպէս սովոր է այս տեսակ պարագաներու մէջ , ամբաստանողք երբեմն չափազանցութեան կըրնային դիմել և ամբաստանեալն ամենայն ինչ քողարկելու մեծ փոյթ կրնար ունենալ . բայց մէկ կողմէ քննութեան միջոցին եղած խոստովանութիւններն , և միւս կողմէ Պրուսայի քահանայական դատուն մէկ մասին տա Ամեն . Ս. Պատրիարք Հայր ուղղած նոր խնդրագիրը , որ թէ և Առաջնորդին դէմ գանդատ՝ այլ սակայն միայն Նորին Սրբազնութեան կամ Արօնական Ժողովին անձամբ անձին հաղորդելի խնդիրներ ունենալին կը յայտնէր , պարտաւորեցին զԱզգ. Վարչութիւնը խնդիրը տասն և հինգ օր երկարել , Ա. Չատկի տօնից պատճառաւ :

Բարթոլոմէոս Եպիսկոպոս՝ այս տնօրէնու-

թիւնն իմացած վարկենին՝ յատենի վարչու-
թեան հրամարեցաւ իւր առաջնորդական պաշ-
տօնէն : Բայց վարչութիւնը ծանոց իրեն թէ
իւր հրամարականը չէր կրնար վերջ տալ դա-
տաստանին , որ ամենայն անաշատութեամբ
պիտի շարունակուէր , եւ ամբաստանողք իրենց
պատիժը պիտի ընդունէին , եթէ չը կարենային
ամբաստանութիւննին ապացուցանել :

Նոյն միջոցին , սրովհետեւ Պրուսայի ժողո-
վուրդը՝ տարօրինակ եղանակաւ մը խնդրոյն
մէջ միջամտելով՝ Առաջնորդին վերադառնալը
և Պրուսայի մէջ դատուիլը կը պահանջէր : Բար-
թաղիմէսու Եպիսկոպոս ալ իւր հրամարականը
յետս կը կոչէր : Վարչութիւնը ծանոց պաշ-
տօնական հրատարակութեամբ թէ այս վէճին
ձեռնհաս ատեանը մի միայն Անգլոնական վար-
չութիւնն էր , և որ մասնաւոր տեսուչ մ'ու-
ղարկել որոշած էր ՚ի Պրուսա , Գաւառական
վարչութիւնը Սահմանադրութեան համաձայն
կազմելու , սրովհա զի Պրուսան օրինաւորապէս
ներկայացնող պաշտօնական մարմին մ'ունենայ
իր գէմը : դատին անդական մէկ քանի կարեւոր
պարագաներն անոր միջնորդութեամբը քննե-
լու և առաջնորդական խնդրոյն նկատմամբ ա-
նոր հետ բանակցելու համար :

Սեմ ուղեր անյիշատակ թողուլ դատին մէկ
մտքը պարագան որ խնդրոյն վրայ մեծ ազդե-
ցութիւն ունի . այն է՝ Եպիսկոպոս Սահակ է-
ֆիմախին՝ որ Բարթողիմէոս Եպիսկոպոսն ամ-
բաստանողներէն մին էր՝ առանց դատին վախ-
ճանին սպասելու Պրուսա վերադառնալը . վասն
զի Բարթողիմէոս Եպիսկոպոս ասկէ առիթ քա-
ղելով հրաման խնդրեց որ ինքն ալ վերադառ-
նայ : Բայց վարչութիւնը պատասխանեց որ ,
իրեն գէմ կըզած ամբաստանութիւններն այն-
չափ ծանր էին որ , եթէ հրամարեալ ալ չ'ըլլար ,
դատին վճիռը չը տրուած կարելի չէր երբէք
իրեն վերադառնալուն հրաման տալ . իսկ Եպի-
սկոպոսն վերադարձին դադով , ըստ որում այս
տանը Բարթողիմէոս Եպիսկոպոսն խնդրանացը
համեմատ Պոլիս կոչուած և դատաստանի մի-
ջոցին նոյն լինը Եպիսկոպոսը յայտնած էր թէ
մասնաւոր խնդիր մը չ'ունէր անոր գէմ և թէ
մի միայն իր ամբաստանութեանցը համար ու-
ղած էր . և քանի որ նա իւր ամբաստանու-
թիւնները ընդունցած և խնդիրը վարչութեան
վճարին էր մնացած , հետեւապէս անոր ՚ի Պո-
լիս կենտրուն հարկ չը կար . այսու ամենայնիւ
առանց վարչութեան գիտութեանը Պրուսա

վերադարձած ըլլալուն համար : Վարչութիւնը
մտեթաց հրաման խրկել որ սոյն յուզեալ միջո-
ցին տեղւոյն ազգային դործոց մէջ չը խառնուի
և ծանոց Բարթողիմէոս Եպիսկոպոսին որ՝ եթէ
զանի ամբաստանէր , պէտք էր գրով խնդրեր
դարձեալ անոր դաւուստը , և թէ այն ատեն՝
ինչպէս առաջին անգամ՝ վարչութիւնը կրկին
բերել կուտար զանի : Բայց Բարթողիմէոս Ե-
պիսկոպոս՝ Եպիսկոպոսնի գէմ անձնական դատ
մը չունենալը վերատին յայտնելով՝ սարգապէս
իւր պաշտօնին դառնալը կը որահանջէր :

Այս միջոցին Բարթողիմէոս Եպիսկոպոս , խմանա-
լով Գաւառական վարչութեան կազմութեանը
համար դացող Տեւոյն պաշտօնին դործադրու-
թեանը գէմ ժողովրդեան մէկ մասին կողմէ
յարուցեալ արդէլքները և զինքն ամբաստա-
նող քահանայից մայրաքաղաքս հասնիլը , ա-
ռանց վարչութեանն հրաման խնդրելու մեկ-
նեցաւ : և անկէ նամակաւ մը իւր վարմունքն
արդարացնելու աշխատելով վարչութեան նե-
րուստութիւնը խնդրեց : Վարչութիւնը պու-
տասխան տուաւ իրեն որ՝ եթէ դեռ ևս առաջ-
նորդական պաշտօնին մէջ ալ դառնուած ըլլար ,
քանի որ ամբաստանութեան տակ դառնուելուն
պատճառաւ իր ուղած հրամանը մերժուած էր ,
մեծ յանցանք մ'էր ըրածը , և հրաւիրեց զինքն
անմիջապէս վերադառնալ և յատենի վարչու-
թեան թէ այս և թէ իւր վրայ կըզած բոլոր
ամբաստանութեանց գէմ խնդրներն արդարա-
ցնելու աշխատի , եթէ կարենար : Բարթողի-
մէոս Եպիսկոպոս դարձեալ չ'անապ վարչու-
թեան հրաւիրին , այն ատեն հետադրով իրեն
հրամայուեցաւ որ դայ . երբ այս հրամանն ալ
չը յարդեց ու ամենին դալու տրամադրութիւն
չ'ունենալն խնացուեցաւ , վարչութիւնը պարտք
համարեց մասնաւոր խնդրադրով մը Բ. Գանէն
պահանջել որ պաշտօնական կերպիւ մայրաքա-
ղաքս բերուի :

Ահա խնդրոյն պատմութիւնը : Այլ յուսամ
թէ այն երեւոյթաններն՝ որք կը կարծէին թէ
վարչութիւնն այս պարագայիս մէջ Պատրի-
արքարանի պատուոյն և իրաւանցը նախանձա-
խնդիր չէ կըզած՝ կը համոզուին թէ սխալ է
եղեր իրենց կարծիրը և անտորակոյս կ'աղա-
սեն վարչութեան վճարին , դատաստանին՝ ար-
դարութեան և օրինաց համաձայն տեսնուած
ըլլալուն կամ չ'ըլլալուն վրայ կարծիք ունենա-
լու համար :

S. ԱՄԲՐՈՍԻՈՍ՝ ՎՐԴ. — Պահ մ'առաջ երբ

ևս կ'առաջարկէի այս հարցումը ետ թողուլ ,
միտքս երբէք մասնաւոր անձ մը պաշտպանել
կամ կուսակցութեան մը ծառայել չէր . այլ
կ'ուզէի որ Բնդհ. Ժողովոյ ընթացքն օրինաւոր-
ութեան համաձայնի : Այլ բողոքեմ այն անձե-
րուն գէմ՝ որք տարբեր դիտումներ կը նշանա-
կեն իմ խօսքերուս , և կուզեմ որ ատենադ-
րութեան մէջ անցնի այս բողոքս : Իսկ դադով
Ազգային իշխանութեան առաջուր կ'ստուե-
լուն՝ ես ալ կ'ուզեմ որ անոր պատիւն ու ազ-
գեցութիւնը պահպանուի . և հարցումը ներ-
կայացնող եօթն Երեսօթականաց ստորագրու-
թեանց վրայ կը յաւելում նաև իմա ալ . սակայն
ամենէն առաջ Սոյ Նիկիոս և Սերաստիոյ Աս-
րապետ Եպիսկոպոսներն իրենց արժանաւոր
պատիժը պէտք է կրեն , վասն զի անոնք ա-
նիշխանութեան դուռ մը բանալով տեղի տուին
Պրուսայի դէպքին :

Պ. ԿԵՆՆ Թ. Է. Ֆ. — Ազգ. վարչութեան կող-
մէ Երեսօթեան էֆ. պատասխանելով մեր հարց-
ման կը յայտնէ թէ՝ վարչութիւնն ալ Բարթողի-
մէոս Եպիսկոպոսն ըմբոստ կը ճանչէ և թէ պէտք
կըզած անօրէնութիւնները ձեռք առած է դայն
՚ի Պոլիս բերել տալու համար : Շատ աղէկ .
սակայն երեսօթականաց ոմանց կործանին չափ
Երեսօթեան էֆ. կարեւոր չը համարիր խնդի-
րը և դայն չէ թէ համբական՝ այլ մասնաւոր
կը կարծէ : Բնդհանուրը մասնաւորներէ կը
բողկանայ , և այս գէտքը՝ թէ և Պրուսայի վի-
ճակին վերաբերեալ՝ սակայն ուրիշ վիճակաց
առաջնորդներու համար ալ պարտազանցու-
թեան և անիշխանութեան օրինակ մը կը դառ-
նայ , Ազգ. վարչութեան արժանապատուու-
թեան կը վնասէ : ուրեմն խնդիրը կարեւոր է և
հանրական : Գառնանք Երեսօթեան էֆ. ՚ի պատ-
մութեան ուրիշ կէտերուն : Այլ նկատեմ թէ
Ազգ. վարչութիւնը շատ յատկապէս շարժ
դատաստանը , և ասկէ ոգուտ քաղելով Բար-
թողիմէոս Եպիսկոպոսն իմաստ է : Այլ նկատեմ
թէ Բարթողիմէոս Եպիսկոպոս՝ դատի ներքե
կըզած միջոցին՝ հրամարեր է առաջնորդական
պաշտօնէ և այնուհետեւ ՚ի Պրուսա խոյս տա-
լով՝ առաջնորդական պաշտօն սկսեր է վարել .
ըսել է միանգամայն պաշտօնի յանդատութիւն
մ'ըրած է նա , վասն զի դրուած է այն ամբ-
ուր՝ որ դադրած էր իրն ըլլալէ : Այլ նկատեմ
թէ վարչութիւնը՝ Բարթողիմէոս Եպիսկոպոսը
պահ մը դատելէ ետև՝ Գաւառական Ժողովու-
րու ընտրութեան ձեռնարկեր է , այս դատը

անոնց յանձնելու մտք : Ուստի կը հարցնեմ
վարչութեան որ՝ եթէ ինք այս դատին միջա-
միտելու իրաւունք չ'ունէր , ինչու միջամտեց և
ինչու իւր ազգեցութիւնը տկարացնելու տեղի
տուաւ . և եթէ իրաւունք ունէր , ինչու յե-
տոյ Գաւառական Ժողովները կազմելու հարկ
տեսաւ , առանց առաջնորդական դատը աւար-
տելու : Այլ նկատեմ նաև թէ՝ երբ Եպիսկոպոսն
էֆ. Պրուսա կը վերադառնայ , Ազգ. վարչու-
թիւնը Բարթողիմէոս Եպիսկոպոսին հաւանու-
թիւնը կը հարցնէ , վերստին դայն ՚ի Պոլիս բե-
րել տալու համար : Ուստի կը հարցնեմ թէ՝
ինչ հարկ կար այս մասին Եպիսկոպոսին հա-
ւանութիւնն առնելու , քանի որ երկուքն ալ
դատի ներքե ինկած էին և ոչ մին ոչ միւսը
կրնար վերադառնալ ՚ի Պրուսա :

Ազգ. վարչութեան տուած՝ պատասխանին
վրայ իմ դիտողութիւններս և քննադատու-
թիւնս , որս իրաւունք ունիմ ընել , վերջացը-
նելով կը կրկնեմ թէ՝ Պրուսայի Բարթողիմէոս
Եպիսկոպոսը՝ ինչպէս կը տեսնուի նոյն իսկ Ազգ.
վարչութեան տուած տեղեկութեանն՝ ըմբոստ
է , վասն որոյ Ազգ. վարչութիւնը պէտք է
վաղ ընդ փոյթ իւր արժանապատուութիւնը
պահպանելու համար պէտք կըզած միջոցն ՚ի
դործ գնէ ազգութեամբ . ապա թէ ոչ՝ ա-
մեն առաջնորդ , երբ դատի ներքե ընկնի Ազգ.
վարչութեան առջև , սցապէս դատը չ'աւար-
տած՝ ռամիկ ժողովրդեան վրայ կ'ոթնելով՝ իւր
վիճակը պիտի խուսէ և անիշխանական ողին
զամենքը վարակէ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Է. Ֆ. — Նախ Պէկեան էֆ.
ի այս հարցումները ստիպողականութիւն չ'ու-
նին , նմանօրինակ գէտքերու տեղի չը տալու
համար են և Ազգ. վարչութեան համարատու-
ութեան ժամանակին վերաբերող դիտողու-
թիւններ ու հարցումներ են : Երկրորդ՝ Պրու-
սայի առաջնորդական խնդիրը Քաղ. Ժողովու-
րիկու կերպարանքով ներկայացուց : Բարթո-
ղիմէոս Եպիսկոպոսը կ'ամբաստանուի աշխար-
հականներէ և եկեղեցականներէ , երկու տե-
սակ՝ այսինքն աշխարհային և կրօնական յան-
ցանօք : Առաջինին համար Եպիսկոպոսն և իւր
ընկերակցաց հետ դատուելու , իսկ երկրորդին
համար քահանայից հետ դատուելու պարտա-
ւոր : Ուրեմն խնդիրը խառն է . և ՚ի նշ իրա-
ւունքով Քաղ. Ժողովոյ Ատենադպիր էֆէնտին
կ'ենէ կը պատասխանէ նաև խնդրոյն կրօնա-
կան մասին համար և կրօն . Ժողովոյ պաշտօն

կը կատարէ Սահմանադրութեան դէմ մեղանշելով :

Երրորդ՝ կը յարէ նաև թէ՛ Բարժուղիմէոս Եպիսկոպոս հրախրուեցաւ, բայց չ'եկաւ . կը հարցնեմ թէ՛ ի՞նչ պատճառներ մէջ բերելով այս հրաւերն անխելի թողուց . թերևս կան պարագաներ որ իւր չը գալը կ'արդարացնեն : Իսկ հրաժարականի խնդրոյն դալով՝ կ'ըսեմ որ, եթէ Բարժուղիմէոս Եպիսկոպոս հրաժեշտ տրուած էր, ինչո՞ւ վարչութիւնն անոր տեղ ուրիշն ընտրել չը տուաւ : Բայց վարչութիւնը կրնայ Բարժուղիմէոս Եպիսկոպոսին՝ որ պատրիարքական կոնդակով և արքունական հրամանագրով առաջնորդի պաշտօն կը վարէր՝ մէկ ստորագրեալ գիրը ցոյց տալ, որ անոր հրաժեշտը հաստատէ : Պաշտօնատար մը երբ իւր կամեցը պաշտօնէն կը քաշուի, ի՞նչպէս կրնայ ելնել և իւր հրաժարականը յետս կոչել : Այս ամենէն կը հետևի թէ՛ Բարժուղիմէոս Եպիսկոպոսին բերնէն հրաժարական բառը ելնելուն պէս՝ վարչութիւնը զայն հրաժարեալ համարել է . և այս աւելի վարչական ձև մ'է : քան օրինաւոր և ճշմարիտ հրաժեշտ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — Պահ մ'առաջ Տ . Ամբաստան վարդապետ՝ Սոս Նիկողոս և Սերաստիոյ կարապետ Եպիսկոպոսներուն ընթացքը յիշելով՝ ի՞նչ ըսել կ'ուզէր արդեօք : Անոնք զեղծում մը գործեցին, բայց այս զեղծումը չը կրնար իւր փաստ յառաջ բերուիլ նրմանօրինակ զեղծումներ արդարացնելու համար :

Կարապետ Եպիսկոպոս թէ և այս սրահուս ՚ի Սերաստիոս, սակայն ազգային պաշտօն չը վարէր և չը պիտի կարենայ վարել, ու ազգային գործերէ մեկուսի կ'ապրի Սոս Նիկողոս Եպիսկոպոսն ալ չէ կրցած կաթողիկոսական աթոռը կորզել և քիչ օրէն Պօլիս կուգայ բարձրագոյն հրամանագրով, իւր արդարացի պատիժը կը բերուի :

Անոնք որ՝ այս երկու մեղապարտ և կեղեցականները պատժելու համար երբ Ազգ . վարչութիւնը պէտք եղած միջոցներն ՚ի գործ դըրաւ՝ վարչութեան արարքը չի խճրճեցին և անոր անօրէնութիւններուն հաւանեցան . երբ հիմայ Բարժուղիմէոս Եպիսկոպոսն ալ իւր գործած յանցանաց համար պատժապարտ կը լինի և Ազգ . վարչութիւնը պէտք եղած միջոցները ձեռք կ'առնու, ի՞նչ ըսել կ'ուզեն արդեօք եղբայրութիւնը պարտկել ջանալով և խճրճելով վարչութեան ընթացքը :

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Հ . ԷՖ . — Վերջապէս հարցումն ուղղուեցաւ և Ազգ . վարչութիւնն իւր պատասխանը տուաւ, յորմէ կ'երևի թէ ամեն պէտք եղած միջոց ձեռք առած է նա, Պրուսայի խնդիրը կարգադրելու և Բարժուղիմէոս Եպիսկոպոսը Պօլիս բերել տալու համար : Այս տեղեկութեանց վրայ հարկ չը մնար ուրեմն խօսքն աւելի երկարել և վարչութեան արարքը դատաքննել, վասն զի այս ընթացքը վարչութեան դատապարտութիւն և անօր լուծումը կ'ենթադրէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս . ԷՖ . — Այս Պրուսայի խնդիրը ուր պիտի երթայ յանդի չը գիտեմ, գիտեմ սակայն որ Ընդհ . Ժողովն իրաւամբ այս խնդրոյն վրայ ուր ուրեմն կը դարձնէ իւր ուղի բայց չէ թէ դատաստանական ատեան մը կազմելու և խնդրոյն դատական պարագաները քննելու համար : Այս խնդիրն էական մաս մ'ունի, Ազգ . իշխանութեան անբունարարելի իրաւանց, հեղինակութեանը հազորդ մաս մը՝ զոր կ'ուզեմ քրքրել անկախ ամեն նկատումէ : Ամեն անոնք որ հոս բազմեր են, և զԱզգը կը ներկայացնեն երեսփոխանարար պարտաւորութիւն ունին սրահել այս իրաւունքը, այս հեղինակութիւնը, զորս ազգային պաշտօնատարներ առաջուր կ'ուզեն կոխել, և սուանց նկատելու Ազգը պաշարող և ճշող հողերը, նոր հողեր ալ կը բարդեն անոնց վրայ, նոր վէրքեր ալ կը բանան և կը ծաղրեն իսկ ազգային իշխանութիւնը, երբ նա անիոյթ գտնուի սրահալանելու իւր արժանապատուութիւնը :

Ո՞վ կըսէ թէ Պրուսայի խնդիրը Սոս և Սերաստիոյ խնդիրներուն նմանութիւնը կը բերէ : Այո՛, ստոյգ է որ Սոս Նիկողոս Եպիսկոպոսն ՚ի Վիլիկիա, և Կարապետ Եպիսկոպոս ՚ի Սերաստիա գացին, բայց անոնք չը կրցին այն պաշտօնները՝ որոց թեկն կ'ածէին՝ կորզել օտար ազգեցութիւններով և տեղական կառավարութիւններէն չը ճանչցուեցան :

Սակայն Բարժուղիմէոս Եպիսկոպոս այս վիճակին մէջ չէ, նա Առաջնորդի պաշտօն կը վարէ ՚ի Պրուսա և Տեղական կառավարութիւնըն ոչ միայն իւր պաշտօնական անձ, իրր առաջնորդ կը նկատէ զինքը, կը բանակցի, այլ և նոյն իսկ նոյն կառավարութեան, Ալի Ռիզա փաշայի, հրամանաւ ելեր գացեր է ՚ի Պրուսա և առաջնորդական աթոռը բազմեր : Ես նոյն իսկ Բարժուղիմէոս Եպիսկոպոսի ձեռագիր մէկ նամակը պատահմամբ ընթերցայ, որու մէջ

կըսէր նա՝ թէ ևս Ալի Ռիզա փաշայի հրամանաւ դացի տեղս նստայ : Ահա հո՞ս է մանաւանդ խնդրոյն էական մասը . Տեղական կառավարութիւն մը կրնայ եղեր Եպիսկոպոս մը՝ որ դատի ներքե է, որ հրաժարեալ է պաշտօնէ՝ Առաջնորդ կարգել . Ազգին իրաւունքը, պատրիարքական իշխանութիւնը փոխանցուեր է անոր : Բարժուղիմէոս Եպիսկոպոս եթէ անհրաման Պօլսէն՝ մեկնելուն համար ըմբոստ է, ի՞նչ անուն տալու է ուրեմն երբ այսպէս Տեղական կառավարութեանն առաջնորդական պաշտօն կ'ընդունի և անոր կոթնելով կ'ընդվզի Ազգային իշխանութեան դէմ : Այս պարագայով Բարժուղիմէոս Եպիսկոպոս կրկնակի յանցանաց տակ է, և եթէ՛ ինչպէս ինքն կը գրէ՝ Պրուսայի կառավարութեան հրամանաւ մեկնել է, այս կէտը մանաւանդ պէտք է գիտնայ Ազգը : Ուստի կ'առաջարկեմ որ այս խնդիրն օրուան կարգն անցնի :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Փափագեան է՞՞ . յայտնեց թէ Բարժուղիմէոս Եպիսկոպոս՝ Պրուսայի կառավարութեան ազգեցութեամբ անհրաման Պօլսէն մեկնելով՝ առաջնորդական պաշտօն կը վարէ, և ամենէն աւելի այս կէտին վրայ ծանրացաւ իւր ազգու խօսքերովը : Ո՞վ և ըլլայ Բարժուղիմէոս Եպիսկոպոսը քաջալերող այս ազգեցութեան հեղինակը, կուսակալ, կառավարիչ, իշխան կամ այլ ոք, ևս զայն չ'եմ վնասուեր և տաղնապիր անոր ազգեցութեան համար, այլ Բարժուղիմէոս Եպիսկոպոսը կը նկատեմ իրբ Եկեղեցոյ պաշտօնեայ, իրբև ազգային պաշտօնատար Ազգային իշխանութիւնը յարգելու պարտաւոր, և իրմէ միայն բացառութիւն կը սրահանջեմ իւր պարտագանցութեան համար, որով իւր Ազգին իշխանութեան կը հետեւի, անհրաման կ'առնու կը քալէ ՚ի Պրուսա և առաջնորդի աթոռը կ'անցնի կը բազմի :

Այս բացառութիւնը կը սրահանջեմ, և այն ատեն պէտք եղածը գիտեմ խօսիլ :

ՕՏԵԱՆ Գ . ԷՖ . — Շատ աղէկ, Սրբազան Հայր, մենք ալ այդ կ'ուզենք :

ԵՌՆՈՒՅԵԱՆ Տ . ԷՖ . — Իմ պատասխանս քննադատեցին Պէկեան և Խօժասարեան էֆէնտիները, սխալ հասկցողութեամբ մը՝ զոր ուղղել կ'ստիպուիմ : Նախ՝ ևս պատասխանեցի յայնու վարչութեան և չէ թէ յանուն կրօն . Ժողովոյ, վասն զի Ազգ . վարչութեան խառն Ժողովը համարտարժէք կը տնօրինէ այն տե-

սակ խնդիրներն՝ որոնք խառն են և երկու Ժողովոց իրաւասութեան միանգամայն ենթակայ : Երկրորդ՝ միջոցաւ Բարժուղիմէոս Եպիսկոպոսի սխալհասկան ամբաստանողները 11 անձինք էին, նա միայն Եպիսկոպոսն է՞՞ ՚ի Պօլիս գալը սրահանջած, և վարչութիւնն այս խնդրանօք զայն Պօլիս բերել տուած էր . սակայն ՚ի վերջոյ Բարժուղիմէոս Եպիսկոպոս՝ անոր հետ դատ չ'ունիմ՝ ըսած ըլլալով, ահա այս պատճառաւ՝ Եպիսկոպոսն է՞՞ ՚ի Պօլիսէն մեկնելէ ետե՛ վարչութիւնը Բարժուղիմէոս Եպիսկոպոսին հարցուցած է որ, եթէ կ'ուզէ զայն նորէն, ՚ի Պօլիս բերել տայ : Երրորդ՝ այս խնդրոյն կեզր . վարչութեան կողմանէ տեղոյն Գաւառական վարչութեան ձգուած ըլլալու առարկութիւնը բողոքովին անտեղի է, վասն զի վարչութիւնը պաշտօնական յայտարարութեամբ բացատրած է արդէն թէ՛ պարզապէս Սահմանադրութեան գործադրութեանը համար Տեառէ մը կ'ուղարկէր, և թէ օրինաւոր Ժողովները կազմուելէ ետքը՝ առաջնորդական խնդրոյն համար անոնց հետ պիտի բանակցէր, և ոչ թէ Բարժուղիմէոս Եպիսկոպոսի դատին համար, որու միայն ստուգութեան կարօտ եղած տեղական կէտերուն ըննութիւնը նոյն Ժողովոց ձեռատի ՚ի հարկին կրնար կատարել : Զորրորդ՝ չ'եմ գիտեր ի՞նչ բանէ կը հետեցնէ Օղտէն էֆ . թէ Բարժուղիմէոս Եպիսկոպոսին հրաժեշտը ատենական ձև մ'է . երբ նա Ժողովին կը ներկայանայ և դատաստանի միջոցին՝ Ս . Աւետարանի մէկ խօսքը մէջ բերելով՝ յօժարակամ պաշտօնէ կը հրաժարիմ կըսէ, ի՞նչ կը նշանակէ այնուհետև յետս կոչումը . միթէ վարչութեան ատենը խաղաղութիւն մ'է :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — (Ընդմիջելով) Այդ յետս կոչումն իսկ առաջոց մ'է, որ Բարժուղիմէոս Եպիսկոպոս հրաժեշտ տուած է իւր պաշտօնէն, և այս մեկնութիւն չ'ընդունիր :

ԵՌՆՈՒՅԵԱՆ Տ . ԷՖ . — (Խօսից թեք ձեռք առնելով) Վերջապէս Բարժուղիմէոս Եպիսկոպոսը հիմա պիտի ստիպուի մայրաքաղաքս դալու, և փափաքելի է որ իւր վրայ եղած ամբաստանութիւններէն զինքն արդարացնէ, և թէ կրնայ :

ՕՏԵԱՆ Գ . ԷՖ . — Եւ սակայն անհրաման մեկնիլը չ'արդարանար երբէք :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ . ԷՖ . — Ունեք պահ մ'առաջ ընդմիջեցին խօսքս և թոյլ չը տուին որ

կարծիքս ազատորէն յայտնելու կարող լինէի : Ազգային թերթերը որ լինեն Պրուսայի խնդրոյն վերաբերող խորհրդածութիւններով, ստէպ հակիրճատ տեղեկութիւններ մեզ կը բերեն, այնպէս որ՝ զանոնք ընթերցողը Բարթուղիմէոս Եպիսկոպոսի կամ հուսակից կամ հակառակորդ լինիլ կ'ստիպուի : Սակայն այս մասնաւոր կողմնէ խնդրոյն, և մեր ուշը գրաւողն է՝ միայն Ազգ. վարչութեան իշխանութեան տկարանալը, որու տեղի կուտայ վարչութիւնը, երբ նահապետական և վարանական ընթացք մը բռնէ : Եթէն երեսփոխանաց հարցման վրայ հաստատուեցաւ թէ՛ Բարթուղիմէոս Եպիսկոպոս ստուգիւ անհրաման մեկներ է Պօլսէն, ապա տամբելով Ազգային իշխանութեան դէմ : Ընդհ. Ժողովոյ պարտքն է հիմա վարչութեան միջոցաւ անոր արժանաւոր պատիժը տալ, որով միայն կարելի է յարգել տալ Ազգային իշխանութիւնը և վերջ տալ այն գայթակղելի անկարգութեանց որոնք մասնաւոր՝ ցու է ինձ ըսել թէ՛ Եկեղեցական դասուն մէջ կը պատահին :

ՊԵՆՍԻՆԻ Թ. ԷՖ. — Կուզեմ վերջ տալ այս խնդրոյն և չեմ ուզեր քննադատել Ազգ. վարչութեան կողմէ տրուած վերջին պատասխանը : Գոհ եմ որ վարչութիւնը մեզի հետ 'ի միասին զգացեր է ու կ'զգայ Բարթուղիմէոս Եպիսկոպոսի ըմբոստութիւնը և արդէն պէտք եղած տնօրէնութեանց ձեռնարկեր է . բայց կը տեսնեմ որ երեսփոխաններէն անոնք կը շփոթեն Բարթուղիմէոս Եպիսկոպոսի անմեղ կամ մեղապարտ ըլլալու խնդրոյն հետ . պէտք չէ այս երկու խնդիրներն իրարու հետ շփոթել : Բարթուղիմէոս Եպիսկոպոս ամբաստանութեան հետեւաբար դասի ներքեւ ինկած է և կրնայ անմեղ ելնել կամ մեղապարտ . դատաստանը կը յայտնէ դայս : Ուստի աւելորդ է այն կէտին վրայ ումանց բրած ակնարկութիւնը : Իսկ անոր ըմբոստ լինելը դատաստանի ներքեւ ձգելն իսկ անտեղի է, քանի որ առանց վարչութեան հրամանին մեկնած է, դատի ներքեւ եղած ատեն . և քանի որ վարչութիւնն ալ կը հաստատէ անոր փախուստը, ուստի ըստ իս՝ եթէ Ընդհ. Ժողովը մեծազոյն մաս ունի՝ պէտք է հրահանգ տալ վարչութեան որ Բարթուղիմէոս Եպիսկոպոսը մէկ օրուան մէջ 'ի Պօլիս բերել տալու ազդու միջոցներ գործադրէ, և թէ միանգամայն Ազգային վարչութեան կողմէ 'ի պաշտօնէ հըրատարակուի անմիջապէս որ՝ նա ըմբոստ է և

մերկացեալ իւր պաշտօնէն : Այս հրատարակութիւնը մասնաւոր անմիջական հարկ մ'է, որովհետեւ նա՝ առաջնորդական պաշտօնը կորզած ըլլալով՝ իւր պաշտօնական յարաբերութիւնները կը շարունակէ և կրնայ դաշնագրեր ստորագրել, ազգային մեծ գործեր տնօրինել, և այլն . որոյ պատասխանատուութիւնը բնականաբար Ազգ. վարչութեան վրայ կը ծանրանայ :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Անոնք որ Բարթուղիմէոս Եպիսկոպոսին վրայ խօսեցան, շուտով դատաստան բրին և վճիռ արձակեցին, մինչդեռ դեռ եւս խնդրոյն քննութիւնը վերջացած չէ : վարչութիւնը՝ Բարթուղիմէոս Եպիսկոպոսը հոս բերել տալու որոշում ըրած և ամեն միջոց ձեռք առած է այս մասին, հետեւապէս քիչ ատենէն կուգայ, և յայտնի է թէ՛ երբ վարչութիւնը, որ և իցէ Առաջնորդ մը բարձրագոյն հրամանագրով բերելու հարկին մէջ կը պտնուի, բընականաբար նոյն Առաջնորդին պաշտօնը կը դադրի : Եթէ վարչութիւնն անոր յանցանացը համար պէտք եղած պատիժը չը տայ, այն ատեն միայն Ընդհ. Ժողովն իրաւունք ունի բողոքելու . հետեւապէս կը մերժեմ այս խնդրոյն վերջոյ եղած վիճարանութիւնը :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԳ. — Կը դիտեմ որ խնդրուած ստիպողականութիւնը վարչութեան համարատուութեան համար է եղեր . վասն զի եղած բոլոր դիտողութիւններն ու խօսքերը համարատուութեան կը վերաբերէին, հետեւապէս հարցումին սահմանէն դուրս են :

Ատենապետ էՖ. յայտնելով թէ՛ ստիպողականութեան խնդիրը շատոնց լուծուած է, կ'աղագրարիէ ատենաբանին խնդրէն չը շեղի :

Ա. ԱՃԱՃԵԱՆ Զ. ԷՖ. — Թէ և հարցումն ուղղուեցաւ և վարչութիւնը պատասխանեց, բայց կը ցաւիմ որ ցարդ կը շարունակուին բանաստեղծութիւններն, որոնք ժամանակի կորուստէ զատ արդիւնք մը չ'ունին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կ'ըսուի թէ Պրուսայի խնդիրն յուզել՝ վարչութեան համարատուութեան ժամանակին կը վերաբերի, և սակայն վարչութիւնը մինչև 1871, ապրիլ 30 իւր անօրինած գործոց համարը պիտի տայ, մինչդեռ Բարթուղիմէոս Եպիսկոպոսի խնդրոյն գրելու որ դարձուածները, փախստի դէպքը նոյն թուականէն ետքը տեղի ունեցան, և բնականաբար համարատուութեան տեղեկագիրը պի-

տի լռէ անոնց վրայ . ուրեմն աւելորդ չէ որ այս մասին վիճարանութիւն մ'ըլլայ այժմէն : ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Պէկեան էՖ. իւր դատումներուն մէջ շարժազանցօրէն յառաջ կ'երթայ, խնդիրը կը բորբոքէ և Բարթուղիմէոս Եպիսկոպոս ըմբոստ և յանցաւոր կ'անուանէ : (Գժգոհ մրմունջներ)

Թէ և վարչութիւնը՝ անհրաման մեկնած է կ'ըսէ անոր համար, բայց չենք դիտեր թէ ի՞նչ շարժառիթներ ցոյց պիտի տայ նա՝ զինքն արդարացելու համար : Թերևս Պրուսայի մէջ ծանր դէպքեր տեղի ունեցան, Եկեղեցիներ գոցուեցան, և այս պարագաներու առջև Բարթուղիմէոս Եպիսկոպոս ստիպուած է ձեւակերպութիւն մ'առնուլ և անհրաման մեկնելու Թերևս Բարթուղիմէոս Եպիսկոպոսն արդարանայ այս պարագաներով, վասն զի պարագաներ կան որ մարդասպանն իսկ կ'արդարացընեն, և Պէկեան էՖ. տակաւ առ տակաւ վար իջնէ իւր բարձրութենէն : Ես կը դարմանամ որ առանց դատաստանի այսպիսի անուանարկիչ անուններ կը տրուին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ Օրսէն էՖ. ի դիտողութեանց հակառակ կը սիդեմ թէ՛ ժողովրդային յուզումներ, Եկեղեցւոյ փակումն և ուրիշ որ և է պատճառներ՝ չեն կրնար երբէք արդարացնել ամբաստանութեան և դատաստանի ենթակայ Եկեղեցականի մը իւր վիճակը վերադառնալը, նոյն վիճակին կուսակալին հրամանաւը միայն : Կ'աղաչեմ Երեսփոխան էՖ. ներքը, որ բարեհաճին մեծ ուշադրութիւն մատուցանել այս պարագային : Զարմանք . երբ Բարթուղիմէոս Եպիսկոպոս օր մը առաջ ուղեւորութեան պատրաստութիւններ կ'ընէ, քիչ մը միջոց չը գտնէր գէթ Ս. Պատրիարքին վերադարձի հրաման խնդրելու : Եթէ այս վիճակը շարունակէ, եթէ այս անկարգութիւններն արդարանան այս տեսակ մեկնութիւններով, որոնց ծայրը մինչև 'ի հեզնութիւն կը յանգի, ալ այնուհետև անիշխանութիւնը բարձր 'ի գըլուիս պիտի տիրէ Ազգին մէջ, և ամբաստանեալն ու յանցապարտը պիտի խուսէ իշխանութեան ձեռքէն, անգոսնէ և արհամարհէ վարչութեան գործութիւնը . և սակայն միշտ պատրուակ մը՝ բարուր մը պիտի գտնէ զինքն 'ի չքմեղս հանելու համար :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Խնդիրն այն վիճակին եկած հասած է որ, ալ վիճարանութիւնն սպառած է ու որոշում մը տրուելու համար մեծա-

զոյն մասի կը կարօտինք : Միայն թէ կը փափաքէի որ մասնաւոր խնդիրը չ'որոշած՝ ընդհանուր խնդրոյն վրայ, սկզբուների խնդրոյն վրայ մէկ բանի խօսք ընէի . այս խնդիրն է Եկեղեցական վարչութեան իշխանութեան սահմանը . այս մասին ըստ իս ծուռ դադափարներ մուտ գտած են Ազգին մէջ, և անոնք են որ տեղի կուտան այս տեսակ դէպքերու, որոնց դէմ ներկայ Ժողովականք իրենց գզացումն յայտնեցին արդէն, սակայն մեծազոյն մաս չը կայ և օրն ալ տարածամած է :

Նոյն իսկ Բարթուղիմէոս Եպիսկոպոսի անհըրաման Պօլսէն երթալը՝ որու համար մեր պատուարժան ընկերակիցներէն մին խիստ պատշաճաբար փախչիլ բառը գործածեց՝ իմ ակնարկած՝ դադափարներու մէկ արդիւնքն է . և այն վարանմունքը որ այս գործին նկատմամբ Ազգ. վարչութեան ընթացքին մէջ կը տեսնուի, կը ցուցնէ թէ վարչութիւնն իսկ ազատ չէ բոլորովին այդ դադափարաց ազդեցութենէն :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Ընդմիջելով) Բընաւ երբէք . Ազգ. վարչութիւնը միշտ իւր իշխանութեան պահպանութեանը նախանձախնդիր եղած է, և այս մասին իւր բոլոր պարտաւորութիւնները կատարած :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — (Խօսից թեքը ձեռք առնելով) Բարեբախտ կը համարիմ զիս եթէ վարչութիւնն այդպիսի ազդեցութիւն մը չէ ընդունած :

Բարթուղիմէոս Եպիսկոպոս իմ սիրած Եկեղեցականներէս մին է . եթէ իմ անձնական յարաբերութեանցս նայէի, այս հարցումը պիտի չ'ստորագրէի . բայց ամէն բանէ վեր է Ազգին շահն ու ազգային հեղինակութիւնն ու պատիւը . միայն թէ ներքի է ինձ կարծել՝ թէ նոյն իսկ Բարթուղիմէոս Եպիսկոպոս իմ վերջ յիշած դադափարներէս մուրեցաւ, և կարծեց թէ վարչութիւնն իր ձեռնհասութեան սահմանին մէջ չէ : Ապա թէ ոչ չէր փորձեր, չը պիտի փորձեր վարչութեան հրամանին դէմ շարժելու յանդեմութիւնը և ժպրհէր փախչելու Պօլիսէն, որով արժանապէս վայելեց այն ըմբոստածականը, զոր Պէկեան էՖէնտի քիչ մ'առաջ կընծայէր իրեն : Արդ ժամ է որ այն ծուռ դադափարներն ուղղուին, և իմ չը սիրած բառովըս ըսելու պարտաւորուած եմ՝ այս ապակեղրանացման խնդիրը միանգամ ը՛ղ միշտ պարզուի և լուծուի, որչափ կարելի է շուտով : Ե-

Թէ Սահմանադրութեան վերաքննութեանը պահուիլ ուղուի, մի և նոյն անտեղութիւնները նորէն կը պատահին: Հոս է խնդրոյն ըստ փառապատկանութիւնը, և կ'ազաչեմ խորովը որ յաջորդ նստին նկատուութեան առնէ այս խնդիրը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը կրկնեմ Օտեան էֆէնտի առաջարկութիւնը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նոյնպէս և ես:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գեռ եւս երկու երեսփոխանք կը մնան խօսից կարգին մէջ նշանակուած, որոց խօսք տալէ ետեւ ա'լ ժամ է որ վերջանան բանախօսութիւններն, և խորովը յաջորդ նիստին խնդրոց կարգը պատրաստէ:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Եօթն երեսփոխանաց հարցման վրայ՝ որոց մասնակից եմ և ես՝ բուն նպատակէն հեռի զանազան առարկութիւններ մէջ բերուեցան, հետեւապէս խօսք ուղած էի անոր ոչին բացատրելու. սակայն ինչ որ կը մտածէի այն մասին, Օտեան էֆէնտի խնայտուն առնախօսութեան մէջ ամբողջութեամբ զբաղուիլ, ուստի աւելորդ կը համարիմ կրկնել:

ՈՍԿԱՆՅ. ԷՖ. — Եղած բանախօսութիւններէն ես սա կրցի հասկնալ թէ՛ Բարթուղիմէոս Եպիսկոպոս թերեւս արդարանայ իւր վրայ եղած աշխարհային և կրօնական ամբաստանութիւններէն, սակայն իւր անհրաման երթալուն համար ըմբոստ է և անարդարանալի: Գալով կեդրոնացում և ապակեդրոնացում ըստ անկողնուներն, ես արդէն անցեալ տարի և անկէ ետքը քանի մը անգամ դիտել տուեր եմ խորովոյն թէ՛ բոլորակ մը կը գծենք առանց կեդրոնը գիտնալու. և ահա նորէն մի և նոյն խնդիրն է երեւան կելնէ և անոր լու-

ծում մը տալու կարեւորութիւնն զգալի կ'ըլլայ: ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Բարթուղիմէոս Եպիսկոպոսի խնդիրն օրուան կարգը անցընելու մասին եղած առաջարկութիւնը կը մերժեմ. սակայն կեդրոնացման և ապակեդրոնացման խնդրոյն համար կը ձայնակցիմ Օտեան էֆ. ի ըրած առաջարկութեան, և կը փափաքիմ որ միանգամ ընդ միշտ լուծուի այս խնդիրը:

Գիւանը յաջորդ նիստին խնդրոց կարգը պատրաստեց, այսպէս, և խորովին ներկայացուց:

1. Վաւերացումն նորընտիր երեսփոխանաց.
2. Ատենական կանոնադրութիւն.
3. Համարատուութիւն Ազգ. Վարչութեան.
4. Հրատարումն Ազգ. Վարչ. Բաղ. Խորովոյ:
5. Կեդրոնացումն և ապակեդրոնացումն.
6. Վերաքննութիւն Սահմ. — Գլուխ Ա.
7. Բացակայ երեսփոխանաց գրաւոր դիտարկութիւններն ընդունելի պիտի ըլլա՞ն, թէ ոչ:

Ատենադպիր էֆ. ներկայութեան տու մարէն քաղեալ ցուցակ մ'ընթերցաւ, ծանուցանելով որ, առանց օրինական պատճառի երեք անընդմիջական բացակայութիւն ունեցած են:

Արրահամեան Սարգիս էֆէնտի
 Երլտըզեան Գասարար
 Տամիաճեան Արրահամ
 Խորովին՝ ըստ նախորդ որոշման ինքնին հրատարեալ հրատարակեց այս երեք երեսփոխանները:

Ատեանը վերցաւ ժամ 10 1/4 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԱՏԵՆԱԳՊԻՐ
 Գ. Ս. ՕՏԵԱՆ Յ. Հ. ՄԷՐԵՏԻՄ-ԳՈՒՂԻ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատուն Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցւոյ բանկալները :